

զանիկա Էջմիածնի մէջ աթոռակիրց⁵ : Ամիր-
զունայ Սանը տուաւ իւր հաւանութիւնը .
զրեց Մեղքիսեղեկ նաեւ Շահին թէ «Ես ծե-
րացեալ եմ եւ ոչ եմ բաւական վարել զիշ-
խանութիւնս . սա իմ որդի է , խնդրեմ զի սմա
չնորհնացես զկաթուղիկոսութիւնն» :

Քիչ յետոյ Սահակ մեկնեցաւ Պարսկաս-
տան ներկայանալու Շահին եւ ստանալու
անկէ իւր ընտրութեան հաստատութիւնը :
Մեղքիսեղեկ մնաց Էջմիածին : Պարտատէր-
ները դարձեալ իրմէ կը պահանջէին պարտ-
քերը : Տաճարին սպասները դրաւ մահմեդա-
կաններու քով գրաւի , գոհացնել կարենա-
լու համար պարտատէրները . բայց ձեռք բե-
րուած գումարը չբաւեց ամէնուն : Յուսա-
հատ դրութեանս առջեւ՝ որոշեց Մեղքիսեղեկ
փախչիլ արտասահման : Առած հետն երկու
եպիսկոպոս՝ 1626ի դարնանամուտին Կողբի
ճանապարհով հասաւ Կարին , անկէ Կ . Պոլսոյ
վրայէն անցաւ Լվով-Կամենից , ուր եւ վախ-
ճանեցաւ 1627 Մարտ 18ին (Դաւր . 225—228) :

Աւետիս կաթողիկոս վախճանած էր ար-
դէն : Դաւիթ կենդանի էր զեռ ի Նոր-Ջուղա .
իսկ Սահակ կը թափառէր Պարսկաստան :

⁵ Այս առթիւ կը գրէ Գրիգոր Դարանազցի (էջ
297) . Ձեռնադրեց Մեղքիսեղեկ « զՍահակ անուն տոգէտ
եւ անտոակ , քան զինքն առաւել թոյլ եւ թերի » :